

ՆՈՐԱՍՈՒՇԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՀՊՏՀ տնտեսության կարգավորման և
միջազգային տնտեսական
հարաբերությունների ֆակուլտետի
ղեկան*

ՄԵՐԳԵՑ ՍՈԼՈՂՈՎՆԻԿՈՎ

*Բելառուսի ազգային տեխնիկական
համալսարանի տնտեսության և
իրավունքի ամբիոնի վարիչ*

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ¹

Ճգնաժամը և բարեփոխումների փաստացի իրողությունները

1990-ական թվականներից ի վեր նախկին ԽՍՀՄ երկրներում, այդ թվում՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությունում, տնտեսության ինստիտուցիոնալ, արդյունաբերական կամ կառուցվածքային հարմարեցումը շուկայական պայմաններին ընթացավ ոչ թե կառավարելի գործընթացների, այլ քառսային փլուզման շրջանակներում: Այդ պատճառով է, որ ձևավորված տնտեսության կառուցվածքը չափազանց խոցելի է արտաքին և ներքին գնային ու ոչ գնային ցնցումների նկատմամբ: 2008-2009 թվականների համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը մեկ անգամ ևս բացահայտեց ու ընդգծեց այդ իրողությունը: Տևական տնտեսական աճին հաջորդած անսպասելի մեծ անկումը, բյուջետային ճգնաժամը, մակրոտնտեսական այլ պարամետրերի վատթարացումը հարկադրում են վերանայել տնտեսական քաղաքականության, թվում է՝ անբեկանելի ճշմարտություն համարվող մոտեցումները:

Հետճգնաժամային իրողությունների պայմաններում ակնհայտ է դառնում, որ շուկայական ուժերի ազատ խաղն ի գործու չէ ապահովելու տնտեսության երկարաժամկետ կառուցվածքային-տեխնոլոգիական արդիականացումը ու, դրա հիման վրա, մրցունակ ենթակառուցվածքների ձևավորու-

¹ Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԳՊԿ-ԲՀ ՀՀԲՀ «ՀՀ և Բելառուսի շուկաների սուբյեկտների գործունեության միջազգայնացումը երկու երկրների տնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներդրումն, հարմարեցման և ներդրման բնագավառում» 11Ե-09 թեմայի ֆինանսավորման շրջանակներում:

մը: Այս պարագայում կերպափոխվող բազմաթիվ երկրների կառավարություններ սկսել են գերապատվություն տալ տնտեսական աճի խթանման որոշակի ընտրողական գործիքներին կամ դրանց որոշակի հավաքածուներին:

Հայաստանի Հանրապետության Կառավարությունն, այս առումով, բացառություն չէ. մշակվել և գործողության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը»²: Ըստ փաստաթղթի՝ իրականացվող արդյունաբերական քաղաքականության հիմքում արտահանման ներուժ ունեցող հեռանկարային ճյուղերի զարգացմանն աջակցման միջոցով տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնումն է: «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունն արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված հավասարակշռված և փուլային միջոցառումների համախումբ է, որը նպատակադրում է արտահանման աճը և դիվերսիֆիկացիան», - ասված է փաստաթղթում: Այստեղ շեշտադրվում է արդյունաբերական քաղաքականության միջոցով տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման, արտահանման ներուժ ունեցող հեռանկարային ճյուղերի զարգացմանն աջակցման միջոցով տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնման անհրաժեշտությունը³:

Ըստ էության, արդյունաբերական քաղաքականությունը ճյուղային-կառուցվածքային ներգործությունների բնագավառ է, որի նպատակը որոշակի ոլորտների, ընկերությունների կամ դրանց փնջերի՝ քլաստերների զարգացման պետական օժանդակությունն է: Վերջիններս ազգային նորամուծական համակարգի հիմնատարրերն են: Այդուհանդերձ, այդ համակարգի ձևավորման հիմնական խոչընդոտները ոչ թե շուկայի, այլ համակարգային ձախողումներն են: Դրանք առաջին հերթին պայմանավորված են տնտեսական համակարգի մասնակիցների միջև համագործակցության ոչ բավարար մակարդակով, հանրային՝ հատկապես հիմնարար գիտության և տնտեսության գործարար հատվածների միջև համագործակցության բացակայությամբ, տեխնոլոգիաների փոխանցման համակարգում գործող ինստիտուտների թուլությամբ, տեղեկատվության համակարգի ոչ արդյունավետ գործողությամբ ու խափանումներով: Գլխավոր խափանումը կապված է հարմարեցման հետ, որը երբեմն կոչում են *հարմարեցման խափանման խնդիր*:

Ցանկացած արդյունաբերական քաղաքականություն, վերը նշված խնդիրների լուծման իմաստով, ենթադրում է խիստ ընտրողական միջամտություն տնտեսությանը, որի նպատակը դրա առավել մրցունակ կառուցվածքի, ուստի և տնտեսական աճի ավելի արդյունավետ հեռանկարների ապահովումն է: Թվում է՝ արդյունաբերական քաղաքականությունը կարող է անել այն, ինչին հնարավոր չէ հասնել շուկայական ուժերի ազատ խաղի

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն. ՀՀ Կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի թիվ 49 արձանագրային որոշում:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 2:

կամ, ավելի նեղ իմաստով՝ շուկայական հավասարակշռության պայմաններում:

Նախորդ տասնամյակների շուկայական-ազատական բարեփոխումների նպատակը, ի վերջո, տնտեսության՝ առաջադիմական միջազգային չափանիշներով մրցունակ կառուցվածքի ձևավորումը պետք է լիներ: Համեմայնդեալս, նորդասական տնտեսագիտական մտածելակերպի ու արժեքային համակարգի տեսակետից, նման պնդումն անառարկելի էր: Ավելի քան երկու տասնամյակների հետևողական ազատական բարեփոխումներից հետո, սակայն, հարց տանք՝ արդյո՞ք մեր տնտեսությունն այսօր մրցունակ կառուցվածք ունի: Պատասխանն ակնհայտ է. նման վիճակ պարզապես գոյություն չունի: Շուկայական բարեփոխումների ընթացքում տնտեսության կառուցվածքային փոխակերպումն ընթացել է ավելի շուտ ինքնաբերաբար, ոչ արդյունավետ, ավելացված արժեքի շատ ցածր մասնաբաժին պարունակող տնտեսական միավորների ձևավորման ուղղությամբ: Հետևաբար՝ բարեփոխումների փորձն ու արդյունքները, նաև վարվող քաղաքականության տրամաբանությունը որոշակի իմաստավորման և, ինչու չէ՞ վերանայման կարիք ունեն ինչպես տեսական-մեթոդաբանական, այնպես էլ գործնական կիրառության տեսակետից:

Արդյունաբերական քաղաքականության համատեքստը

Այս կամ այն երկրի զարգացման վերջնական չափանիշը, ի վերջո, այդ երկրի ազգաբնակչության բարեկեցության բարձր մակարդակն է, բոլոր խավերի արժանապատիվ ու ապահով կենսակերպը: Համապատասխան պայմանների ապահովումը պայմանավորված է նրանով, թե տվյալ երկիրն ինչպիսի մասնակցություն ունի համաշխարհային տնտեսության, մասնավորապես՝ համաշխարհային եկամտի⁴ ձևավորման ու բաշխման մեջ: Համաշխարհային եկամտի ձևավորման ու բաշխման համակարգը, այդ առումով, արժեքի հավելաճի, ասել է թե՛ եկամտի գոյացման, որոշակիորեն փակ շղթաների ամբողջություն է, ինչը մի յուրահատուկ բուրգ է հիշեցնում: Վերջինիս հիմնական բաղադրիչները առաջնակարգ կամ բարձր տեխնոլոգիաներն են (high-tech): Որևէ ապրանքի (այդ թվում՝ տեխնոլոգիայի) արտադրությունն ու վաճառքը՝ սկսած գաղափարի առաջադրումից, նախագծումից, հետազոտական-որոնողական աշխատանքներից մինչև բուն արտադրությունը, սերտորեն կապված են նորամուծության հետ, ինչը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ արժեքի մեծացման կամ ավելացված արժեքի կուտակման գործընթաց: Ընդ որում, որքան ապրանքը բարդ է և դրանում գերակշռող է գիտահետազոտական ու նորարարական բաղադրիչը, այնքան ավելի մեծ ավելացված արժեք է պարունակում:

Թեև համաշխարհային եկամտի բաշխման համակարգը ձևավորվում ու գործում է տարերայնորեն, այդուհանդերձ, մրցակցային մեխանիզմի գործողության շնորհիվ ենթակա է որոշակի կարգավորման: Վերջինս պայ-

⁴ Համաշխարհային եկամուտը միջազգայնորեն գործող միասնական վերարտադրական շղթայի շրջանակներում արտադրվող ապրանքների ու ծառայությունների վաճառքից գոյացող եկամուտն է՝ ի հաշիվ ավելացված արժեքի կենտրոնացման ու բաշխման:

մանավորում է եկամտի բաշխման ծայրահեղ անհամաչափ բնույթը: Այս հանգամանքը ածանցվում է աշխատանքի միջազգային բաժանման ձևավորված համակարգի իրողություններից: Այդ իմաստով, որևէ երկրի մասնաբաժինը համաշխարհային եկամտի մեջ, վերջին հաշվով, պայմանավորված է նրանով, թե ինչ ապրանքներ են արտադրում այդ երկրի ընկերությունները, որքանով են դրանք գիտատար, ասել է թե՛ որքանով են հավելյալ արժեքներ պարունակում:

Որևէ նոր արտադրանքի ստեղծման նախնական փուլերում՝ հետազոտությունից մինչև նմուշի պատրաստումը, որևէ գիտելիքի մենաշնորհային տնօրինումը որոշակի ազգային ընկերությունների թույլ է տալիս ստանալ ավելացված արժեքի գերակշիռ մասնաբաժինը: Այդ փուլերում է, որ մենաշնորհային դիրք ունեցող ընկերությունները ավելացված արժեքի իրենց մասնաբաժինը կարողանում են վերածել գերշահույթի: Սակայն արտադրանքի հետագա տարածումը, նմանակումը և զանգվածային արտադրությունը արտադրանքի կենսապարբերաշրջանի վերջին փուլերում էապես կրճատում են ավելացված արժեքի (եկամտի) ընդհանուր ծավալը:

Կարելի է փաստել՝ այս առումով համաշխարհային տնտեսությունը տեխնոլոգիաների բրգածն համակարգ է, որի վերնամասում բարձրակարգ տեխնոլոգիաները տնօրինող փոքրաթիվ հարուստ երկրներն են, իսկ բուրգի ստորին հատվածում՝ վերջիններիս անցած տեխնոլոգիական «հետագծերը» նմանակող՝ զարգացող և անցումային երկրների մեծամասնությունը: Միջազգային տնտեսական մրցակցությունը, ըստ էության, ընթանում է ոչ միայն զարգացած երկրների կամ առաջատար անդրազգային ընկերությունների միջև, այլև ծավալվում է բարձրակարգ տեխնոլոգիաներ և ապրանքներ արտադրող-մատակարարող երկրների՝ «տեխնոգեներատորների» և այդ ապրանքներն ու տեխնոլոգիաները ընդօրինակող-յուրացնող երկրների մեծամասնության՝ «նմանակողների» (իմիտատորների) շրջանակներում:

Ըստ նորագույն հետազոտությունների՝ համընդհանրացման գործընթացի խորացումը հանգեցնում է հարուստ և աղքատ երկրների միջև համաշխարհային եկամտի բաշխման անհամաչափության մեծացման: Ըստ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Դանի Ռոդրիկի՝ այդ ընթացքում հարուստ երկրներն «ավելի են հարստանում, իսկ աղքատները՝ աղքատանում»⁵: Այս ենթատեքստում նկատվում է եկամտի բաշխման անհավասարության խորացում նաև անցումային երկրների միջև⁶: Համաշխարհային եկամտի առյուծի բաժնի յուրացման հիման վրա զարգացած հետարդյունաբերական երկրների փոքրաթիվ խմբի զարգացման տեմպերի արագացումը և դրանց բնակչության բարեկեցության կտրուկ աճը, ի հաշիվ աշխարհի մնացած երկրների մեծամասնության առաջընթացի կասեցման և գոյության կենսապայմանների ուղղակի վատթարացման, կարելի է ասել՝ կազմում է արդի համընդհանրացման գլխավոր հակասությունը:

⁵ **Rodrik D.**, The New Global Economy and Developing Countries: Making Openness Work. Policy Essay No 24. Washington, Overseas Development Council, 1999, p. 58-63.

⁶ Տե՛ս UNDP. Human Development Report 1999. N.Y., Oxford, Press, 1999, էջ 48:

Նշենք, որ այս կամ այն երկրի, ընկերության համար արժեքի հավել-
ածի շղթաների մատչելիությունը ոչ միայն (և ոչ այնքան) զուտ գիտական,
տնտեսական, քաղաքական շարժառիթներով է պայմանավորված, որքան
հարուցված է ավելի լայն՝ քաղաքակրթական-մշակութային, ինչպես նաև
աշխարհատնտեսական գործոններով: Այս իրողությունները բնութագրում
են համաշխարհային նոր տնտեսակարգի ձևավորման ներքին զսպանակ-
ները, որոնց անտեսումը կարող է ճակատագրական լինել հատկապես լայ-
նածավալ ինստիտուցիոնալ վերափոխումներ անող ու այդ ենթատեքստում
զարգացած երկիր դառնալու ակնկալիք ունեցող երկրների, այդ թվում՝ Հա-
յաստանի Հանրապետության համար:

Ակնհայտ է, որ վերջին տասնամյակների ընթացքում համաշխարհա-
յին տնտեսության անհամաչափ զարգացումը հանգեցրել է եկամտի բաշխ-
ման անհավասարության մեծացման: Անցումային երկրներում բարեկե-
ցության աճը ոչ միայն առաջանցիկ չէ՝ համեմատած զարգացած երկրների
կենսամակարդակի աճի հետ, այլև ընդհակառակը՝ տեմպերի առումով
զգալիորեն հետ է մնում դրանցից: Այլ կերպ ասած՝ նման տնտեսական
աճն էլ ավելի է խորացնում աղքատությունը և սոցիալական բևեռացումը:
Ինչո՞ւ: Այս հարցի պատասխանը միանշանակ է. տնտեսական աճը չի
ուղեկցվում համաշխարհային եկամտից ազգային տնտեսության ունեցած
մասնաբաժնի գոնե համամասնական ավելացմամբ:

Փաստորեն, տնտեսական աճի այդ մոդելը, որը պայմանականորեն
անվանենք «աղքատացնող տնտեսական աճի» մոդել, տարիմաստորեն ի
հայտ է գալիս, երբ երկրում զբաղվածությունն աճում է, թողարկումն ու ար-
տահանումներն ավելանում են, մինչդեռ շահույթներն ու աշխատավարձերը
(եկամտները) համաշխարհային եկամտի մեջ հարաբերականորեն
կրճատվում են: Չնայած տպավորիչ տնտեսական աճին, երկիրը համաշ-
խարհային եկամտից հետզհետե ավելի ու ավելի քիչ մասնաբաժին է կոր-
ցում: Այս երևույթը ակնառու դրսևորվում է վերջին տասնամյակում շոշա-
փելի տնտեսական աճ արձանագրած երկրների պարագայում:

Կարծում ենք՝ «աղքատացնող տնտեսական աճի» սպառնալիքները
կչեզոքացվեն միայն այն դեպքում, երբ միջնաժամկետ հեռանկարում ան-
ցում կատարվի տնտեսական աճի այլընտրանքային՝ գիտության նվաճում-
ների և բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված նորամուծական տնտեսա-
կան աճի մոդելին: Այս ընթացքը ենթադրում է առաջին հերթին քաղաքա-
կան և ինստիտուցիոնալ միասնացում համաշխարհային տնտեսության
զարգացման վեկտորը որոշող առանցքային տնտեսաքաղաքական համա-
կարգերին և, իհարկե, հավելյալ արժեքի միջազգային վերարտադրական
շղթաներին:

Ենթադրաբար՝ Հայաստանի Հանրապետության համար առավել
նախընտրելի աշխարհատնտեսական (նաև աշխարհաքաղաքական ու
աշխարհառազմավարական) գործընկերը Եվրոպական միության կառույցն
է: Միայն քաղաքական ու տնտեսական միասնացումն այդ ընդարձակ
տարածաշրջանին հնարավորություն կընձեռի ապահովելու Հայաստանի
տնտեսության տեխնոլոգիական արդիականացումն ու այդ հենքի վրա ան-
ցումը տնտեսական աճի նորամուծային մոդելին: Վերջինս ենթադրում է

տնտեսության ճյուղերի և արտադրությունների ներառում ավելացված արժեքի միջազգային շղթաներում այն հաշվով, որ այդ գործընթացն ապահովի համաշխարհային եկամտի բաշխման մեջ շոշափելի մասնակցություն: Վարվող տնտեսական քաղաքականությունը, ըստ այդմ, պետք է լրջորեն վերանայվի ու ճշգրտվի՝ հաշվի առնելով ժամանակակից նորամուծային տնտեսությանն անցման բարդագույն խնդիրներն ու մարտահրավերները: Անցման գործընթացում հարկ է հաշվի առնել համաշխարհային եկամտի ձևավորման ու բաշխման որոշիչները, ինչպես նաև ազգային-տնտեսական համակարգի ամբողջական արդյունավետությունը:

Նշված իրողությունները հարկադրում են խոսել նաև համաշխարհային տնտեսության մեջ երկրի մրցակցային դիրքերի հաստատման կամ, ավելի ստույգ՝ ռազմավարական դիրքավորման անհրաժեշտության մասին: Այս գերխնդրի լուծումը նույնպես ենթադրում է վերականգնողական տնտեսությունից անցում նորամուծային տիպի տնտեսության: Ընդ որում, նշված պայմաններում ավելացված արժեքի արտադրությունը ավելի ու ավելի մեծ չափերով կենտրոնացնում է այն միջազգային վերարտադրական շղթաներում, որոնք օժտված են յուրահատուկ տեխնոլոգիական, մարքեթինգային և կառավարչական գիտելիքի հավաքակազմով: Հենց այդ օղակներն են ապահովում գիտելիքի արտադրության և տարածման հատվածի՝ նոր տնտեսության ու տնտեսության ավանդական հատվածների միջև օրգանական կապը:

Տնտեսության արդիականացմանը զուգընթաց անհրաժեշտ է ձևավորել ռեսուրսային և ինստիտուցիոնալ այնպիսի հենք, որը թույլ կտա տեխնոլոգիաների սովորական փոխառման (նմանակման) ռեժիմից անցում կատարել գերազանցապես սեփական տեխնոլոգիական հիմքի վրա զարգացման քաղաքականության⁷: Միայն այս պարագայում հնարավոր կլինի համաշխարհային եկամտի ստեղծման մեջ այնպիսի մասնակցություն ունենալ, որը կապահովի արտադրողականության և բնակչության բարեկեցության բարձր մակարդակ:

Ներկա զարգացումները վկայում են նաև, որ ավելի թույլ ու աղքատ երկրների համար հիմնական խնդիրը ոչ միայն (և ոչ այնքան) համաշխարհային տնտեսությանը ամեն գնով միասնացումն է, այլև վերջինիս այնպիսի տարբերակի ընտրությունը, որի շնորհիվ կարճաժամկետի բնակչության եկամուտների կայուն աճ: Այլ կերպ ասած՝ անցումային երկրների համար ընդունելի պետք է համարվի ինտեգրման միայն այնպիսի տարբերակը, որը կապահովի բնակչության կենսամակարդակի անշեղ աճ՝ ի հաշիվ համաշխարհային եկամտից ավելի ու ավելի մեծ մասնաբաժին կորզելու. հակառակ պարագայում համընդհանրացման ազդեցությունները տվյալ երկրի համար կլինեն բացասական, քանզի հումքային կամ մարդկային կցորդի վերածվելու հավանականությունը այդ դեպքում կմեծանա:

⁷ Shtu **Калинин А.**, Построение сбалансированной промышленной политики: Вопросы структурирования целей, задач, инструментов, „Вопросы экономики”, N 4, 2012, էջ 132:

Արդյունաբերական քաղաքականության տեսական հիմնավորումները

Արդյունաբերական քաղաքականության ժամանակակից ըմբռնումներն ավելի լայն են, քան ավանդական ճյուղային-ոլորտային մոտեցումները: Այստեղ խնդիրը սոսկ արդյունաբերության հատվածական պետական օժանդակության մեջ չէ. դա վերաբերում է տնտեսության ողջ կառուցվածքին՝ ներառյալ ծառայությունների ոլորտը: Ժամանակակից ըմբռնմամբ՝ արդյունաբերական քաղաքականությունը ծնվում է շուկայի ձախողումներից, մյուս կողմից՝ դրա անհրաժեշտությունը թելադրված է տեխնոլոգիական արդիականացման ու մրցունակության մեծացման պահանջներով: Արդի խոշոր տեսաբաններից մեկը՝ Դանի Ռոդրիկը, արդյունաբերական քաղաքականությունը, լայն իմաստով, բնութագրում է որպես «առավել դինամիկ ու մրցունակ կառուցվածքների ձևավորման ուղղությամբ պետություն-մասնավոր հատված նպատակամղված համագործակցություն»⁸:

Նշված համատեքստում արդյունաբերական քաղաքականությունը հասկացվում է իբրև տարբեր ինստիտուցիոնալ սուբյեկտների (պետություն, գործարարություն, միջնորդ կառույցներ, ընկերակցություններ, հետազոտական, ֆինանսական ինստիտուտներ և այլն) այնպիսի համատեղ ծրագրային-նպատակային ջանքերի համադրում, որոնց նպատակը միջազգային չափանիշներով մրցունակ, նորամուծական առումով կենսունակ ու ավելացված արժեքի մեծածավալ շղթաներ հարուցող կառուցվածքների ստեղծումն է:

Եթե փորձենք առավել պատկերավոր բնութագրել, ապա, ավանդական իմաստով, արդյունաբերական քաղաքականությունը իր բնույթով ուղղահայաց քաղաքականություն է՝ ուղղված տնտեսության առանձին ճյուղերի կամ տնտեսական միավորների պետական օժանդակությանը: Այնինչ, ժամանակակից իմաստով, արդյունաբերական քաղաքականությունը նաև հորիզոնական փոխներգործությունների համակարգ է, ավելի ստույգ՝ ուղղահայաց և հորիզոնական քաղաքականությունների համադրություն, ինչը նշանակում է, որ այդ պայմաններում տիրապետող են դառնում քաղաքականության մատրիցային մոդելները: Ավանդական կամ ուղղահայաց արդյունաբերական քաղաքականության մոդելները կոչված են ապահովելու որոշակի կառուցվածքային տեղաշարժեր՝ հիմնված որոշակի ճյուղային առաջնահերթությունների վրա: Հորիզոնական քաղաքականությունը, ընդհակառակը՝ ենթադրում է ընկերությունների կամ դրանց խմբերի պետական օժանդակություն նորամուծային ոլորտում՝ անկախ ճյուղային պատկանելությունից:

Նկատենք, որ արդյունաբերական քաղաքականությունը կարող է բախման մեջ մտնել այլ բնույթի պետական տնտեսական քաղաքականությունների հետ, որոնցից հատկապես կարևոր են երկուսը՝ առևտրայինը (հայրենական արտադրողներին և սպառողներին պաշտպանելու քաղաքականությունը) և մրցակցայինը: Այդ դեպքում լուրջ խնդիրներ կարող են ա-

⁸ **Rodrik D.**, Has Globalization Gone Too Far? Institute for International Economics. Washington, DC.1997, p. 2-3.

ռաջանալ, այսպես կոչված, երիտասարդ (նորամուծական մեծ ներուժ, սակայն շատ թույլ ռեսուրսներ ունեցող) ճյուղերին օժանդակելու հարցում:

Մատրիցային արդյունաբերական քաղաքականության պարագայում պետության խնդիրն է հանդես գալ որպես համակարգող՝ նորամուծությունների հարցում տնտեսական գործակալների կոոպերատիվ վարքագիծը (համագործակցության պատրաստականությունը) ապահովելու համար: Ժամանակակից տեխնոլոգիական նորամուծությունները շատ բարդ երևույթներ են, ու դրանց զարգացումը հնարավոր է շուկայի սուբյեկտների ոչ միայն մրցակցության, այլև համագործակցության, հատկապես տեխնոլոգիական փնջերի (քլաստերների) շրջանակներում:

Կառուցվածքային քաղաքականության կարևոր տարրերից մեկը արժեքի համաշխարհային շղթաների մեջ ներգավվելն է: Ընկերություններն այսօր համընդհանրացման ռազմավարություն են իրականացնում. դրանց արտադրությունները սփռված են ամբողջ աշխարհում: Այդ շարքում է նույնիսկ այնպիսի գիտատար ոլորտ, ինչպիսին տեղեկատվական տեխնոլոգիաներն են: Դա զարգացող ու անցումային տնտեսությամբ երկրների համար համաշխարհային տեխնոլոգիական սանդուղքի աստիճաններով բարձրանալու, նորագույն տեխնոլոգիաներ փոխառելու լավ հնարավորություն է: Ինչպե՞ս կարելի է ներգրավվել այդ շղթաների մեջ, կառավարությունն ինչպիսի՞ գործիքներով կարող է նպաստել դրան: Ըստ որոշ փորձագիտական գնահատականների (Ջ. Ստիգլից, Ջ. Դոսի, Մ. Բիմոլի)⁹՝ այդօրինակ շղթաներում ներգավվելը 15-20 անգամ ավելի մեծ եկամուտներ կարող է ապահովել, քան ինքնին արտաքին առևտրի ազատականացման հարուցած օգուտները կարող են լինել⁹:

Ակնհայտ է, որ ռաջիոնալ տնտեսական քաղաքականությունը բոլոր իրավիճակներում չի կարող համընդգրկուն և համապարփակ լինել, քանի որ պետք է համապատասխանի երկրի տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակին: Այս պնդումը բավականին ակնառու և անգամ պարզունակ է թվում: Համեմայնդեալ, սկսած 1990-ական թվականներից, տնտեսական բարեփոխումների միջազգային հետազոտողների շրջանում տարածված էր այն տեսակետը, որ բոլոր զարգացող երկրները պետք է վերակառուցեն իրենց ինստիտուտները միևնույն «քաղադրատոմսով»: Մասնավորեցումը, արտաքին առևտրի, կապիտալի հոսքերի ազատականացումը և շուկաների ապակարգավորումը, բյուջետային կոշտ սահմանափակումների կիրառումը, սահմանային հարկադրույքների նվազեցումը, օտարերկրյա ներդրումների նկատմամբ սահմանափակումների վերացումը, արդյունաբերական քաղաքականությունից հրաժարումը սոցիալ-տնտեսական հետամնացության հաղթահարման այն բազմաբնույթ «դեղամիջոցներն» էին, որոնք, Վաշինգտոնյան կոնսենսուսի սկզբունքների համաձայն, կիրառվեցին Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրների վերաբերմամբ¹⁰:

⁹ Stiglitz Industrial Policy and Development. The Political Economy of Capabilities Accumulation. Edited by Cimoli M., Dosi G., Stiglitz J.E., New York, NY: Oxford University Press. 24 September. 2009, էջ 608:

¹⁰ http://ru.wikipedia.org/wiki/Вашингтонский_консенсус

Այդ «դեղամիջոցների» գործադրման արդյունքներն անսպասելի էին: Ըստ մի շարք հայտնի տեսաբանների (Ջ.Ստիգլից, Ռ.Նելսոն, Ջ.Դոսի)¹¹ նշված երկրներում ու տարածաշրջաններում այդօրինակ հանձնարարականների կիրառման արդյունքներից էին տեխնոլոգիական խզումների հետագա խորացումը, տարաբնույթ ինստիտուցիոնալ «թակարդների» (աղքատություն, կոռուպցիա, սոցիալական բևեռացում, հանցավորության աճ և այլն) առաջացումը, սոցիալական ձեռքբերումների կորուստը, ժողովրդավարության նահանջը և մարդու իրավունքների խախտումները: Այդ երկրների տխուր փորձը ցույց տվեց, որ Վաշինգտոնյան կոնսենսուսի խորհրդատվությունները պետք չէ դիտարկել որպես բազմաբնույթ ու համընդգրկուն բաղադրատոմս:

Փորձը ցույց է տալիս, որ կապիտալի շուկայի ապակարգավորումը երբեմն ազդում է ներդրումների աճի վրա, բայց հաճախ նաև կապիտալի արտահոսքի և ֆինանսական ճգնաժամի պատճառ է դառնում: Վիճակագրական տվյալների մանրակրկիտ վերլուծությունը չի հաստատում տնտեսության բացության, առևտրի ազատականացման միարժեք դրական ազդեցությունը տնտեսական աճի վրա. այնինչ՝ որոշակի հանձնարարականների ձևակերպումը զուտ տեսական դրույթների կամ էլ որևէ տեղային փորձի վիճակագրական տվյալների բազայի վրա, չի նպաստում առաջադրված նպատակների իրականացմանը:

Անցյալ ժամանակաշրջանի բարեփոխումների բնագավառում արձանագրված ձախողումներն ու դրանց համիմաստ վերլուծությունները հանգեցնում են այն եզրակացությանը, որ ճիշտ են միայն զարգացող տնտեսության բարեփոխման ընդհանուր սկզբունքները՝ դեպի շուկա ուղղորդող ազդակների առկայությունը, մակրոտնտեսական կայունությունը և սեփականության իրավունքի ապահովումը, խաղի ընդհանուր կանոնների երաշխավորումը և այլն:

Համապարփակ բաղադրամիջոցների բացակայությունը նաև նշանակում է՝ այն քաղաքականությունը կամ ինստիտուտները, որոնք արդյունավետ են զարգացած երկրների համար, պարտադիր չէ, որ այդպիսին լինեն զարգացող կամ անցումային տնտեսությամբ երկրների համար, քանի որ տնտեսական կառավարման ռացիոնալ ռազմավարությունը համարվում է ֆունկցիա՝ տնտեսական, ինստիտուցիոնալ և քաղաքակրթական-մշակութային բնութագրիչներից: Իսկ վերջիններս խիստ բազմազան են ու ներգործությունների առումով՝ տարամետ:

Արդյունաբերական քաղաքականության մեթոդաբանական մոտեցումները

Տնտեսական աճի խթանման մեջ պետության դերի ճշգրտումը համարվում է կենտրոնական և առավել քննարկվող հարցերից մեկը թե՛ տնտեսագիտության տեսության, թե՛ տնտեսական քաղաքականության մեջ: Վերջին տասնամյակներում տնտեսությանը պետության միջամտության

¹¹ Տե՛ս **Cimoli M., Dosi G., Stiglitz J.E.**, Industrial Policy and Development. The Political Economy of Capabilities Accumulation. New York, NY: Oxford University Press. 2009, էջ 1-2:

ձևերի ու հնարքների վերաբերյալ մոտեցումները որոշակի էվոլյուցիա են ապրել: 1950-60-ական թթ. կառավարությունների մեծ մասն իրենց քաղաքականությունն իրականացնելիս ելնում էին հետապնդող զարգացման մեջ պետության արդյունավետ միջամտության որոշիչ դերից: Այդ ժամանակահատվածում ընդունելի էին քեյնսյան բնույթի հակապարբերաշրջանային կարգավորման միջոցները: Ծանր ու տևական պատերազմներից հյուծված ու վերականգնման համար մեծածավալ պետական ներդրումներ ենթադրող երկրների զարգացման մոդելների համար այդպիսի մոտեցումները, թերևս, արդարացված էին:

1970-ական թթ. երկարատև պարտքային ճգնաժամներից հետո, սակայն, այդ հիմնադրույթը ենթարկվեց կոշտ քննադատության, և առաջին պլան մղվեց պետության նվազագույն միջամտության նորդասական տեսակետը. այն է՝ պետության կողմից ապահովել սեփականության իրավունքը, վարել պատասխանատու դրամավարկային քաղաքականություն, տրամադրել նվազագույն սոցիալական երաշխիքներ և մասամբ ֆինանսավորել ենթակառուցվածքները, բայց, դրա հետ մեկտեղ, հրաժարվել տնտեսական աճը լրահատկացումների, արտոնյալ վարկերի, արտադրության մեջ պետական ներդրումների և այլնի օգնությամբ խթանելու փորձերից:

Սակայն, իր հերթին, տնտեսությանը նվազագույն միջամտության դրույթը տապալվեց լատինամերիկյան և աֆրիկյան երկրներում 1980-ական թվականներին ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման և 1990-ականների սկզբներին նախկին սոցիալիստական երկրների՝ շուկայական տնտեսությանն անցման ժամանակաշրջանում: 1990-ական թթ. կեսերին մոտեցումները սկսեցին փոփոխվել: Մատնանշելով այս հանգամանքը՝ բարեփոխումների տեսության հայտնի մասնագետ Դ. Ռոդրիկը 1997 թ. գրել է. «Լավ լուրը ոչ միայն այն է, որ ճոճանակը սկսել է հետադարձ շարժը, այլ նաև այն, որ այս անգամ մենք ունենք զգալի հնարավորություններ կանգ առնելու որոշակի խելամիտ միջին դիրքում և ոչ թե շարունակելու տատանումը հարկադրական եզրերի միջև»¹²:

Տարբեր զարգացում ունեցող և տարբեր ռեսուրսային հնարավորություններով օժտված երկրների տնտեսական քաղաքականությունները առանձնանում են միմյանցից: Երկրներից յուրաքանչյուրն ընտրում է որոշակի ռազմավարություն տնտեսական աճը խթանելու համար. դրա համար նրանք ունեն տարաբնույթ հնարավորություններ և իրականացման մեթոդներ: Ուստի այդ քաղաքականության գործիքների ազդեցության աստիճանն ու հետևանքները նույնպես տարբեր են լինում. մի մասն ապահովում է զգալի, մյուս մասը՝ չնչին աճ:

Այդուհանդերձ, արդյունաբերական քաղաքականության մեթոդների և գործիքների ընտրությունը մասնագիտական գրականության մեջ թեժ բանավեճերի առարկա է դառնում¹³: Արդյունաբերական քաղաքականությանը դեմ լինելու հիմնական փաստարկները հետևյալն են՝

¹² **Rodrik D.**, The „Paradoxes” of the Successful State// European Economic Review. 1997. Vol. 41, p. 412.

¹³ Стату Государственная политика промышленного развития России: От проблем к действиям /под ред. Примакова Е./ М., „Наука”, 2004, էջ 5-6:

- Ժամանակակից միջազգային իրավունքները արդյունաբերական քաղաքականության իրականացման հնարավորություն չեն տալիս, մասնավորապես, ժամանակակից անդրազգային ընկերությունները չեն կարող պետական արդյունավետ քաղաքականության օբյեկտ համարվել:

- Հնարավոր չէ ապացուցել, որ արդյունաբերական քաղաքականությունը կարող է հաջողություն ապահովել, քանի որ այն ադավաղում է շուկայական ազդանշանների համակարգը և հանգեցնում անարդյունավետ որոշումների կայացման:

- Չարգացող երկրներում արդյունավետ տնտեսական քաղաքականություն վարել հնարավոր չէ, քանի որ.

ա) կառավարությունը չունի լիարժեք տեղեկատվություն առաջնահերթությունների հիմնավորվածության վերաբերյալ,

բ) քիչ են ձեռնհաս պետական պաշտոնյաները,

գ) տնտեսությանը միջամտելը խթանում է կոռուպցիան և հանգեցնում «իշխանության յուրացման»¹⁴:

Նկատենք սակայն՝ լայնորեն տարածված կարծիքն այն մասին, որ սեփականության իրավունքի պաշտպանությունը և չկոռումպացված բյուրոկրատիան անհրաժեշտ են տնտեսական աճի բարձր մակարդակի ապահովման համար, չի հաստատվում փորձով: Համեմայնդեպս, ոչ մի աղքատ երկրում բարեփոխումների կամ զարգացման սկզբնական փուլում չեն կարողացել հասնել ինստիտուտների լավագույն որակի, մյուս կողմից՝ անորակ ինստիտուտներն, անկասկած, խոչընդոտում են տնտեսական աճը: Այդ մասին են վկայում վերջին հետազոտությունները, որոնք ապացուցում են, որ երկարաժամկետ տնտեսական կայուն աճ հնարավոր է, եթե երկրում առկա են որակյալ քաղաքական ինստիտուտներ, տեղի է ունենում քաղաքական գործիչների ու ընտրախավերի բնականոն փոխատեղում, մրցակցային են ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական շուկաները¹⁵: Բայց նույնիսկ սեփականության իրավունքների կատարյալ պաշտպանության դեպքում էլ, առանց շուկայի ձախողումների հաղթահարման, խոշորածավալ արդիականացում հնարավոր չէ: Հետևաբար՝ կառավարությունը կոչված է դրանում զգալի դեր կատարելու:

Հաշվի առնելով վերջին տասնամյակներում իրականացված բարեփոխումների բացասական հետևանքները՝ տեսաբանները հետազոտել են այն տիպական իրավիճակները, երբ շուկայական ուժերը չեն կարող արդյունավետ զարգացում ապահովել: Բնորոշ օրինակ են բարձր տեխնոլոգիական ոլորտներում դրսևորվող արտաքին էֆեկտները (էքստերնալները), երբ դրանց զարգացման նպատակով կատարված ներդրումների հատույցները միայն մասնակիորեն են յուրացվում ներդրողների կողմից: Արդյունքում՝ այսպիսի ներդրումներից ավելի շատ շահում է ամբողջ հասարակությունը (մասն ալ երկրների), քան առանձին ներդրող ֆիրմաներ: Հասարակությունը նմանատիպ ներդրումներից շահում է անգամ այն դեպքում, երբ դրանք ան-

¹⁴ Տե՛ս **Rodrik D.**, Industrial Policy for the Twenty-First Century.:KSG Faculty Research Working Paper 04-047/ Harvard University, 2004, էջ 37:

¹⁵ Տե՛ս **Acemoglu D.**, Introduction to Modern Economic Growth. Princeton University Press. 2008, էջ 767-777:

շահավետ են ֆիրմաների համար: Ավելին, էքստերնալների կամ մասշտաբի աճող հատույցի դեպքում գոյություն ունեցող պայմաններից և պատահական տատանումներից կախված, շուկայական համակարգը կարող է հայտնվել արագ կամ դանդաղ աճի հետագծում:

Այսպիսով՝ եթե երկրի ֆիրմաներն իրականացնում են ինտենսիվ գիտահետազոտական և տեխնոլոգիական մշակումներ, իսկ դրանց արդյունքները փոխարկվում են միմյանց, տնտեսությունն արագ զարգանում է, ֆիրմաների շահույթներն ավելանում են, և վերջիններս հնարավորություն են ունենում շարունակելու բարձր աճ ապահովող հետազոտությունները: Իսկ եթե գիտական և տեխնոլոգիական մշակումներ չեն կատարվում, ապա աճի տեմպերը ցածր են լինում, իսկ դա նշանակում է, որ ֆիրմաների մշակումները զգալի չեն, առանձին ֆիրմաների մշակումներից ստացվող հատույցը նախաձեռնությունների համար անբավարար է, ծախսերն էլ այդ բնագավառում շարունակ հետաձգվում են: Այս ամենը ենթադրում է երկարաժամկետ բնույթի ռազմավարական վարքագիծ, այնինչ շուկայական միջավայրում խաղորդներն ավելի շուտ հակված են կարճաժամկետ ու արագ հատույց պահանջող ծրագրերի:

Դանդաղ տնտեսական աճի հետագծից անցումն արագ աճի հետագծին ամբողջ համակարգի մասին տեղեկությունների հավաքման և բազմաթիվ տնտեսական գործակալների ջանքերի համակարգման խնդիր է առաջացնում. ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը մրցակցային շուկան չի կարող լիարժեքորեն ապահովել: Պետք է նշել, որ և՛ տեղեկատվական, և՛ համակարգման էքստերնալները վառ արտահայտվում են հատկապես հետճգնաժամային հատվածում, երբ պահանջվում է արտադրական հզորությունների նորացում, հետևաբար, տարբեր ոլորտներին համապատասխան՝ ֆիրմաների երկարաժամկետ ռազմավարություն: Այս տեսակետից Հայաստանի Հանրապետության Կառավարության որդեգրած ռազմավարությունը՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության մշակման ու իրականացման վերաբերյալ, կարելի է ասել, բավական լուրջ մոտեցում է՝ համահունչ նշված դրույթներին:

Սակայն, ըստ տեսական բազմաթիվ ընդհանրացումների, շուկայի ձախողումների կողքին ավելանում են պետության բազմաթիվ ձախողումներ ևս: Պետության միջամտությունը հաճախ վատթարացնում է դրությունը սեփականաշնորհման գործընթացների իրականացման, պետական պաշտոնյաների ցածր որակավորման, արդյունավետ որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայության հետևանքով: Չժխտելով ձախողումների առկայությունը՝ այդուհանդերձ, պետք է պարզել այն պայմանները, որոնց դեպքում պետական միջամտության այս կամ այն ձևը արդյունավետ կամ անարդյունավետ է:

Բոլոր դեպքերում՝ հատկապես հետճգնաժամային ժամանակահատվածում արագ տնտեսական աճի պետական խթանումը հաճախ կապվում է արդյունաբերական քաղաքականության որևէ տարբերակի գործադրման հետ: Այս տեսակետից հատկապես ընդգծվում է նշված քաղաքականության գործիքակազմի ընտրողականության հանգամանքը: Այստեղ մի բևեռում որոշակի ոլորտների կամ անգամ ֆիրմաների օժանդակությունն է,

մյուսում՝ ունիվերսալ բնույթի նվազագույն ընտրողական միջոցները, ինչպիսիք են արժույթի փոխարժեքի քաղաքականությունը, ենթակառուցվածքներում ներդրումները, վերակառուցման և զարգացման բանկերի կազմավորումը, ներդրումների խթանման հարկային քաղաքականությունը, ներմուծման արտոնյալ պայմանների ստեղծման ճանապարհով նոր տեխնոլոգիաների իրացման ընդլայնումը և օտարերկրյա ներդրումների ներգրավումը:

Ընտրողական միջոցները պահանջում են քաղաքականության օբյեկտի վիճակի վերաբերյալ ընդլայնված տեղեկացվածություն և բնույթով բավականաչափ ռիսկային են: Ընդ որում, որքան բարձր է որոշումների ընդունման գործընթացի անորոշության աստիճանը, այնքան նվազ արդյունավետ է ընտրողական քաղաքականությունը: Այս խնդիրը հատկապես արդիական է կերպավորվող տնտեսությունների համար, որոնցից է նաև ՀՀ տնտեսությունը: Այդուհանդերձ, նման տնտեսություններում միայն քաղաքականության բազմաբնույթ գործիքներով հնարավոր չէ լուծել արդիականացման ծավալուն խնդիրները:

Գործնականում շատ պետություններ իրականացնում են այնպիսի արդյունաբերական քաղաքականություն, որն ամենևին չի համապատասխանում տեսության վերը նշված հանձնարարականներին: Այսպես՝ տնտեսության առանձին ճյուղերին և ոլորտներին տրամադրվող ընտրողական օժանդակությունը ձևավորվում է տարբեր տարածքային կամ քաղաքական լոբբիստների շահերի ազդեցության ներքո, ուստի վերջնական արդյունքը կարող է և չհամապատասխանել օպտիմալ ռազմավարությանը: Այսպիսի մտահոգություններ կան նաև մեր պարագայում: Ասենք՝ լրահատկացումները կամ հարկային արտոնությունները, կախված լոբբիստական ճնշումներից, կարող են բաժին հասնել նրանց, ովքեր ուժեղ են ու ի վիճակի են այդ նպատակներով առավել մեծ միջոցներ ծախսել: Դրա հետևանքով, օրինակ, կարող են որպես պետական օժանդակություն ստացողներ հանդես գալ շուկայում գերմենաշնորհային կարգավիճակ ունեցող տնտեսական խմբավորումները:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տվյալներով ԱԱՀ գծով մոտ 14,5 մլրդ դրամի արտոնություններ են տրամադրվել 75 միլիարդ դրամի ներդրումային ծրագրերի համար: Այդուհանդերձ, դժվար է գնահատել դրանց արդյունավետությունը: Ըստ նախարարության տվյալների՝ այդ ներդրումների շնորհիվ 1700 նոր աշխատատեղեր են ստեղծվել: Սակայն ինչպիսի՞ն են այդ աշխատատեղերը. արդյոք ստեղծո՞ւմ են ավելացված արժեքի մեծ ծավալներ, միջազգային չափանիշներով մրցունակ են (աշխատատեղերը մրցունակ են համարվում, եթե դրանցից յուրաքանչյուրի ստեղծումը արժեցել է առնվազն 10.000 դոլար)¹⁶: Այս հարցերի պատասխանները չեն տրվում:

¹⁶ <http://mineconomy.am/arm/35/gortsaruyt.html>

Տնտեսական աճի խթանումը և արդիականացման փուլերը

Շատ հեղինակների կարծիքով տնտեսության արդիականացման տարբեր փուլերում արդյունավետ կարող են լինել մակրոտնտեսական խթանման զանազան գործիքներ ու մեթոդներ: Բարեհաջող արդիականացման համար անհրաժեշտ է աճի խթանման քաղաքականության համապատասխանեցումը սահմանված սկզբունքներին: Հատկապես հետաքրքիր է այն երկրների տնտեսությունների բարեփոխումների փորձը, որոնց առջև արդիականացման խնդիր է ծառացել պատերազմի, հեղափոխության կամ տնտեսական ճգնաժամների հետևանքով առաջացած երկարատև հետամնացությունից հետո:

Տեսաբանների շրջանում շարունակում է ակտիվ բանավեճերի առարկա մնալ տնտեսության արդիականացման ընթացքում տնտեսական և սոցիալական նպատակների համադրման խնդիրը: Կախված արդիականացման տվյալ փուլում լուծվող խնդիրներից՝ արդյունաբերական քաղաքականության մեջ շեշտադրումները կարող են որոշակիորեն փոխվել: Ըստ Ա. Կալինինի՝ բարեփոխումների սկզբնական փուլում, որպես կանոն, տնտեսական նպատակներն ու շահերը գերակա են սոցիալական, ասել է թե՛ ողջ հասարակության նպատակների ու շահերի նկատմամբ: Հաջորդ՝ միջանկյալ փուլում, տնտեսական և հիմնարար սոցիալական շահերը պետք է հավասարակշռված լինեն: Զարգացման երրորդ փուլում պետք է տիրապետող դառնան սոցիալական շահերն ու նպատակները¹⁷:

Այդուհանդերձ, համակարգային փոխակերպման փուլում գտնվող երկրների դեպքում նպատակահարմար է տարբերակել տեխնոլոգիական արդիականացմանը միտված արդյունաբերական քաղաքականության 4 փուլ՝

1. արդիականացման սկզբնական փուլ,
2. արտահանմանը կողմնորոշված աճի նախաձեռնման փուլ,
3. արագացված զարգացման խթանման փուլ,
4. զարգացած շուկայի կամ նորամուծական տնտեսական աճի փուլ¹⁸:

Նշված փուլերը և դրանց համապատասխանությունը տնտեսական քաղաքականությանը վառ արտահայտված են Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Թայվանի և մի քանի նման երկրների «տնտեսական հրաշքի» օրինակում, որոնք վերջին 50 տարիների ընթացքում զարգացող երկրներից վերածվեցին զարգացածի: Մի շարք այլ երկրներում էլ այդ փուլերն ամբողջությամբ չդրսևորվեցին, և արդիականացումն այստեղ չիրականացավ դրանց զարգացման մակարդակին չհամապատասխանող տնտեսական քաղաքականության ընտրության պատճառով:

Նշենք այս փուլերից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշները և դրսևորումները:

Արդիականացման սկզբնական փուլում երկիրն իր առջև ներքին արտադրության զարգացման խնդիր է դնում: Ներմուծումն ունենում է ուժեղ

¹⁷ Տե՛ս **Калинин А.**, նշվ. աշխ., էջ 134:

¹⁸ Տե՛ս **Полтерович В.**, Эволюционная теория экономической политики. „Вопросы экономики“, N 7, 2006, էջ 10-11:

արտաքին (էքստերնալ) ազդեցություն՝ նպաստելով տեխնոլոգիական հմտությունների և գիտելիքների ձեռքբերմանն ու կուտակմանը, որը անհրաժեշտ է ազգային արդյունաբերության բազային ճյուղերի զարգացման համար: Այդ ընթացքում ակտիվորեն փոխառվում են տեխնոլոգիաները, ներմուծողները ստեղծում են հայրենական ձեռնարկություններ: Այս փուլում ռացիոնալ քաղաքականությունը պետք է խթանի ներդրումային ապրանքների ներկրումը (կիրառվող գործիքներն են՝ սարքավորումների ներմուծման լրահատկացումները, մաքսային արտոնությունները և այլն)՝ դրա հետ մեկտեղ սահմանափակելով վերջնական արդյունաբերական արտադրանքի ներմուծումը համապատասխան մաքսային գործիքներով: Տվյալ փուլի զարգացման ընթացքում, անգամ մաքսային պաշտպանության դեպքում, ազգային արտադրողները բախվում են ներքին շուկայի սահմանափակվածության խնդրին, որը խոչընդոտ է դառնում դրանց արդյունավետության աճի և միջազգային որակական չափորոշիչների բավարարման համար:

Արդիականացման երկրորդ՝ արտահանմանը կողմնորոշված տնտեսական աճի մախսածեղման փուլի առաջնահերթ խնդիրը արտաքին շուկաներ ներթափանցելն է: Արտահանող ֆիրմաները ստիպված են լինում մրցակցել առաջատար երկրների արտադրողների հետ՝ կիրառելով նոր տեխնոլոգիաներ և կառավարման մեթոդներ, հետևելով որակի բարձր չափանիշներին, գործադրելով մարքեթինգային ռազմավարություն: Այս փուլում արտահանողների հաջողությունների փորձն ազդում է մյուս խաղողների վրա: Այստեղ դրական դեր ունի արտահանման արտաքին էֆեկտը:

Այս փուլին, որպես կանոն, բնորոշ են շուկայական ինստիտուտների թուլությունը, մարդկային կապիտալի և տեխնոլոգիաների հարաբերական ցածր մակարդակը: Այն երկրները, որոնց այնուհետև հաջողվեց դուրս գալ արագացված կամ նորամուծական աճի ուղի, արդյունավետորեն օգտագործեցին ինչպես ընտրողական, այնպես էլ ունիվերսալ գործիքներ արտահանման ընդլայնման և ներմուծման սահմանափակման համար. այսպես՝ ինդիկատիվ պլանավորում, տեխնիկական վերակառուցման պետական ծրագրեր, խոշոր ընկերություններին պետական աջակցություն, ազգային արժույթի փոխարժեքի նվազեցում (թուլացում)՝ շնորհիվ արտարժութային զգալի պահուստների կուտակման, արտահանողներին ուղղակի լրահատկացումներ կամ արտոնյալ վարկավորում, շուկայի կամ, որ նույնն է՝ տնտեսական մրցակցության կոշտ կարգավորում: Այս փուլի կարևոր նպատակներից են շուկայական ենթակառուցվածքների ստեղծումը և տնտեսության աստիճանական ապակենտրոնացումը:

Արագացված զարգացման խթանման փուլին հատուկ են տնտեսության մեջ պետության ուղղակի միջամտության նվազեցումը, ընտրողական և ունիվերսալ գործիքների միավորումը, արտահանման և ներմուծման ճանապարհին խոչընդոտների աստիճանական կրճատումը, կապիտալի շուկայի ապակարգավորումը և ներդրումների ներգրավման խթանումը:

Չարգացած շուկայի կամ նորամուծական զարգացման փուլում արդյունաբերական քաղաքականության ընտրողական գործիքների մեծ մասը կորցնում է հրատապությունը կամ կիրառվում է միայն բացառիկ դեպքե-

րում: Սովորաբար զարգացած երկրների կառավարությունները հետևում են «հակապարբերաշրջանային» սկզբունքին՝ անկման փուլում մեծացնելով միջամտությունը, իսկ բարենպաստ իրադրության ժամանակահատվածում նվազեցնելով այն:

Տնտեսական աճի արդյունավետ խթանման համար անհրաժեշտ է հիմնվել այնպիսի ինստիտուտների համակարգի վրա, որը պետության, բիզնեսի և հասարակության փոխհարաբերությունների գործընթացում ապահովում է արդյունավետ ռազմավարության ընտրություն: Այս տեսակետից հատկապես ուսանելի է Հարավարևելյան Ասիայի երկրների փորձը: Արևելասիական տնտեսությունների օրինակը վկայում է, որ ներմուծման կրճատման և արտահանման աճի խթանման քաղաքականություններն ամենևին էլ իրարամերժ այլընտրանքներ չեն: Ավելին, այդ երկրների (Ճապոնիա, Հարավային Կորեա, Թայվան, Սինգապուր) մեծ մասում արդիականացման երկրորդ և անգամ երրորդ փուլերում դրանք համատեղվում էին: Անընդհատ նվազեցնելով ներմուծման դրույքաչափերը՝ նշված երկրները միաժամանակ ձգտում էին խոչընդոտել ազգային արժույթի իրական փոխարժեքի բարձրացմանը՝ դրանով իսկ պաշտպանելով ներքին արտադրությունը և խթանելով արտահանումը:

Ճապոնիան, մասնավորապես, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կիրառեց արդյունաբերական քաղաքականության շատ յուրօրինակ մոդել՝ խտրություն չդնելով մեթոդների ու գործիքների ընտրության միջև: Արդիականացման 1-ին փուլում Կառավարությունը խնդիր էր դրել վերականգնելու արդյունաբերության հիմնային ճյուղերը՝ դրանք բարձր մաքսային սակագներով պաշտպանելու միջոցով:

Արդիականացման 2-րդ փուլում (1960-ական թվականներ) Ճապոնիայի Կառավարությունը փոխեց առաջնահերթությունները՝ շեշտադրելով երկրի տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացումը: Այս հարցում հատկապես ընդունելի էր արտահանման խթանման (հատկապես քիմիական արտադրանքի) այնպիսի գործիքների կիրառումը, ինչպիսիք էին արտահանման լրահատկացումները: Արդյունքում՝ աճեց արտահանումը, և արագացավ տնտեսական աճը: 1970-80-ական թվականներին (3-րդ փուլ) առաջնահերթ խնդիր էր արագացված աճի ապահովումը բարձր տեխնոլոգիական արտադրությունների զարգացման և արտաքին շուկաներից բարձրակարգ տեխնոլոգիաների փոխառման ճանապարհով: Այս նպատակով պետությունը հեշտացրեց ցածր տոկոսադրույքով վարկերի ստացումը, որոնցով պետք է ներմուծվեին առաջնակարգ տեխնոլոգիաներ: Ձարգացման 4-րդ փուլում արդեն անցում կատարվեց դեպի զարգացման նորամուծական պարբերաշրջան, երբ ընտրողական քաղաքականության գործիքներն իրենց տեղը զիջեցին շուկայական մեխանիզմներին:

Ճապոնիայի արտահանման արագ աճը, առևտրային հաշվեկշռի նշանակալի դրական մնացորդը հարուցեցին արևմտյան երկրների՝ հատկապես ԱՄՆ-ի դժգոհությունը: Նրանք պահանջում էին Ճապոնիայի կենտրոնական բանկի քաղաքականության փոփոխություն՝ մինչև այդ ձգտելով պահպանել իենի կայունությունը: Դրանով հանդերձ՝ իենի կայունացումը համարվում է 1970-ական թվականներին ճապոնական տնտեսության դան-

դադ աճի և 1990-ականներին դրա փաստացի կրճատման պատճառներից մեկը:

Հարավային Կորեայի և Ճապոնիայի տնտեսական զարգացման միջև Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առկա են ակնառու նմանություններ, թեև պետական միջամտությունը Կորեայի տնտեսությանը անմիջական և առավել նշանակալի էր, քան Ճապոնիայում: Կորեական խոշոր արդյունաբերական կորպորացիաները՝ չեբոլները, հզոր պետական ֆինանսական աջակցություն էին ստանում: Բոլոր վարկերը տրվում էին պետական բանկերի միջոցով:

Զարգացած երկրներում ևս արդյունաբերական ընտրողական քաղաքականության գործիքներով տնտեսական աճի խթանումը տարբեր ժամանակաշրջաններում ընթացել է տարբեր արդյունավետությամբ: Հետպատերազմյան ժամանակահատվածում շատ երկրներ կիրառել են ինդիկատիվ կամ ինտերակտիվ պլանավորման համակարգեր՝ նպատակ ունենալով ձևավորելու տնտեսության ցանկալի կառուցվածքներ, իրականացնելու կապիտալի և մնացյալ ռեսուրսների վերաբաշխմանը նպատակամղված խոշորածավալ ծրագրեր: Ինդիկատիվ պլանավորման դերը ոչ միայն մասնավոր ձեռնարկություններին ապագայի վերաբերյալ անհրաժեշտ կողմնորոշումներ տրամադրելն էր, դրանք օգնել են հարթելու պետության և հասարակության միջև բանակցային բախումները, ապահովելու կառավարության քաղաքականության համաձայնեցվածությունը և կարգավորելու մասնավոր սեփականատերերի վարքագիծը:

1950-70-ական թվականներին Արևմտյան Եվրոպայի բազմաթիվ երկրներում կիրառվել են հովանավորչական տարրեր, որոնց միջոցով սահմանափակվել են ներմուծումները՝ ի շահ տեղական արտադրությունների, մյուս կողմից՝ ավելի ուշ ժամանակահատվածում գործադրվել են արտահանումների խթանման անուղղակի մակրոտնտեսական գործիքներ: Ժամանակակից պայմաններում զարգացած երկրները գերադասում են ընտրողական քաղաքականության գործիքները կիրառել նորամուծական տնտեսական աճի հարացույցը շարունակաբար կենսունակ պահելու համար, թեև, առանձին դեպքերում, այդ գործիքները կարող են գործադրվել ավանդական իմաստով ևս: Օրինակ՝ այդպիսին է զարգացած երկրների գյուղատնտեսության ոլորտի նկատմամբ վարվող հովանավորչական քաղաքականությունը. ԱՄՆ-ում, Կանադայում և Եվրոմիության երկրներում ինչպես տասնամյակներ առաջ, այժմ էլ խիստ ընդունված են գյուղատնտեսության մեծածավալ լրահատկացման համակարգերը:

Հետևություններ փոխակերպվող տնտեսությունների համար

Հատկապես համակարգային փոխակերպում ապրող տնտեսություններում իրականացվող արդյունաբերական քաղաքականության համար էական պետք է լինեն մեթոդաբանական մի շարք սկզբունքային մոտեցումներ: Այսպես՝

1. Արդյունաբերական քաղաքականությունը, առաջին հերթին, պետք է ընկալվի իբրև գաղափարախոսություն՝ հիմնված պետություն-մասնավոր

հատված սերտ համագործակցության դրույթի վրա: Այստեղ գլխավորը ոչ թե որոշակի քաղաքականության գործիքների այս կամ այն հավաքածուի ընտրությունն է (թեև դա էլ շատ կարևոր է), այլ քաղաքականության ընդհանուր վեկտորի ընտրությունը և նպատակների հստակ սահմանումը:

2. Արդյունաբերական քաղաքականության մոդելի ընտրությունն ու դրա շրջանակների հստակեցումը հարկ է խարսխել տվյալ երկրում պատմականորեն ձևավորված մասնավոր և հանրային շահերի օպտիմալ համադրության վրա: Դիրքավորման այդօրինակ զուգորդումը պետք է ապահովվի երկու կողմերի շահերի լավագույն փոխլրացման սկզբունքի գործադրման միջոցով:

3. Արդյունաբերական քաղաքականության շրջանակներում իրականացվող կառուցվածքային բարելավումները չպետք է հիմնված լինեն գերազանցապես ճյուղային գերակայությունների վրա: Պետք է ներառվեն ինչպես ճյուղային (ուղղահայաց), այնպես էլ տարածքային (հորիզոնական) կառուցվածքները՝ ծրագրային հենքի վրա: Այսինքն՝ պետությունը պետք է ինստիտուցիոնալ աջակցություն ապահովի մրցունակ և որակյալ քլաստերների առաջացմանը և զարգացմանը:

4. Տեխնոլոգիական ճեղքումների և կառուցվածքային բարելավումների քաղաքականության նպատակադրումները պետք է հզոր աջակցություն ստանան հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների համապատասխան գործիքներով: Արդյունաբերության նոր ճյուղերը կամ նոր քլաստերները պահանջում են հսկայական ներդրումներ, որոնք անհնար է ապահովել սոսկ մասնավոր ներդրողների միջոցներով: Սկսնակ գործարարության (Start-up) ֆինանսավորումը չափազանց ռիսկային է ու ծախսատար, ուստի պետությունը պետք է դրան մասնակցի անուղղակիորեն՝ օգտագործելով վենչուրային ֆինանսավորման համակարգերը:

5. Արդյունաբերական քաղաքականության համատեքստում պետությունը (կառավարությունը) չպետք է դատավորի կեցվածք ընդունի ու ստանձնի շուկայի «հաղթողներին» որոշողի դերը: Կառուցվածքային բարելավումների ու դրանց հիման վրա արտադրողականության բարձրացման խնդիրները պետք է լուծվեն ոչ թե արտոնությունների տրամադրման ու սահմանափակ ռեսուրսների կամայական վերաբաշխման միջոցով, այլ ծրագրային հենք ունեցող որոշումների ընդունման հրապարակային, բաց ու թափանցիկ ընթացակարգերի հիման վրա:

АТОМ МАРГАРЯН

*Декан факультета „Экономического
регулирования и международных
экономических отношений” АГЭУ*

СЕРГЕЙ СОЛОДОВНИКОВ

*Заведующий кафедрой „Экономики и
права” Белорусского национального
технического университета*

Институциональные проблемы направленные на технологическую модернизацию промышленной политики.- В статье представлены проблемы выбора модели экономической политики направленной на технологическую модернизацию. Обосновывается точка зрения, согласно которой в посткризисный период основным средством восстановления экономического роста и структурного улучшения экономики является направленная на технологическую модернизацию промышленная политика. В качестве наиболее приемлемого варианта модернизации трансформационной экономики предложена модель матричной промышленной политики. В данном контексте рассмотрены и обсуждены варианты оптимального сочетания универсальных и селективных инструментов промышленной политики.

АТОМ MARGARYAN

*Dean of the department of „Regulation of
Economy and International Economic
Relations” at ASUE*

SERGEY SOLODOVNIKOV

*Head of the Chair of „Economics and
Law” at BNTU*

Institutional Problems of Technological Modernization Oriented to Industrial Policy.- The problems of the selection of an economic policy model, aimed at the technological modernization in the transition economy, are presented in this paper. It was argued that the export oriented industrial policy is the best way for re-establishment of economic growth and structural improvement of the economy in the postdepression period. It is suggested, that matrix-type industrial policy model is the most preferential variant for the transition economy modernization. In this context, the optimal combination of variants of universal and selective tools of the industrial policy have been considered and analysed.